Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Օրինակելի ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 10-05-2021 թ. որոշմամբ
««ԴԻԱԿՈՆԻԱ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
հիմնադրամի 2020 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը	«ԴԻԱԿՈՆԻԱ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ	
1.2 Գտնվելու վայրը	ԵՐԵՎԱՆ ԱՋԱՓՆՅԱԿ ԱՋԱՓՆՅԱԿ ԹԱՂԱՄԱՍ ԵՐԵՎ.«ՀՈՒՅՍԻ ԱՎԱՆ»Թ. վարչ. շենք	
1.3 Պետական գրանցման համարը	222.160.00380	
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը	2004-08-23	
1.5 ՀՎՀՀ-ն	00068196	
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)	+(374)91514582	
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		
1.8 Էլեկտրոնային փոստը	hripsime.gapantshyan.57@mail.ru	
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
Աննա Ջամբազյան		
Շաքար Դանիելյան		
Ահարոն Ղազարյան		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Բարույեր Ջամբազյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	96	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը	0	
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ	0	
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ծրագրի անվանումը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	նվիրատվություն	1265509000
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
	նվիրատվություն	14170000
9. Հիմնադրի ներդրումը՝		

9.1 Դրամական միջոցներ	0	
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
	նվիրաբերություն կենցաղային ապրանք	3873000
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
սննդօգնություն	421860000	
սոցիալական	256308000	
բուժ օգնություն	48760000	
ուսման և դասընթացի վճարներ	46960000	
գյուղատնտեսական	24210000	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	1056260000	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	798098000	

Նշումներ՝

Կից ներկայացվում է աուդիտորական եզրակացությունը՝ 31 թերթից:
թերթերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

«Լոնդոն Բիզնես Գրուպ» ՀՁ ՍՊԸ
ՀՀ, Երևան, Խորենացի 27ա/1
"London Business Group" JV LLC
27a Khorenatsi str., apt. 1, Yerevan, RA
Tel: (+37410) 541272, 560852
E-mail: audit@lbg.am
Web: www.lbg.am

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Դիակոնիա» Բարեգործական Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին ու ղեկավարությանը

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Դիակոնիա» Բարեգործական Հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) կից ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2020թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի և դրամական հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Հիմնադրամի ֆինանսական վիճակը 2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՄԷՍԽ կանոնների: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Հիմնադրամի ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Հիմնադրամը լուծարելու կամ Հիմնադրամի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է՝ ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:
Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող են ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:
ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում.
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.

- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը.
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Ի թիվս այլ հարցերի՝ մենք տեղեկացնում ենք ղեկավարությանը աուդիտի պլանավորված շրջանակի և ժամկետների, աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

«Լոնդոն Բիզնես Գրուպ» ՀՁ ՍՊԸ

3 մայիսի, 2021թ.

Աուդիտի ղեկավար
Մ. Խոջայան

Տնօրեն
Տ. Զորյան

«ԼՈՆԴՈՆ ԲԻԶՆԵՍ ԳՐՈՒՊ»
"LONDON BUSINESS GROUP"
01223655
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
JOINT VENTURE LIMITED LIABILITY COMPANY
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
REPUBLIC OF ARMENIA
N16

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	Ծանո-թագր.	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	950,586	952,431
Կենսաբանական ակտիվներ	5	29,197	3,392
Ոչ նյութական ակտիվներ	6	48,473	50,085
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		*1,028,256*	*1,005,908*
Ընթացիկ ակտիվներ			
Ապրանքանյութական պաշարներ	7	65,612	120,975
Դեբիտորական պարտքեր	9	2,609	3,122
Տրված կանխավճարներ	9	31,570	2,007
Դրամական միջոցներ	10	764,182	553,041
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		*863,973*	*679,145*
Ընդամենը ակտիվներ		**1,892,229**	**1,685,053**
Կապիտալ և պարտավորություններ			
Ընդամենը կապիտալ			-
Պարտավորություններ			
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ակտիվներին վերաբերող շնորհներ	11	1,028,256	1,005,908
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		*1,028,256*	*1,005,908*
Ընթացիկ պարտավորություններ			
Կրեդիտորական պարտքեր	9	13,867	14,537
Եկամուտներին վերաբերող շնորհներ	11	843,574	653,578
Արձակուրդային պահուստ	12	6,532	11,030
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		*863,973*	*679,145*
Ընդամենը պարտավորություններ		**1,892,229**	**1,685,053**
Ընդամենը կապիտալ և պարտավորություններ		**1,892,229**	**1,685,053**

Կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Տնօրեն
Բ. Ջամբազյան

Գլխավոր հաշվապահ
Հ. Ղափանճյան

3 մայիսի, 2021թ.

Կ. Տ.

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	Ծանոթագր.	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեություն			
Եկամուտներ			
Եկամուտ ճանաչված շնորհներ	13	1,056,260	1,086,106
Այլ եկամուտներ	14	122,382	45,882
Ընդամենը եկամուտներ		**1,178,642**	**1,131,988**
Ծախսեր			
Կառավարման և վարչական ծախսեր	15	(327,282)	(414,287)
Իրականացրած ծրագրեր	16	(798,098)	(661,503)
Այլ ծախսեր	17	(52,974)	(55,248)
Ընդամենը ծախսեր		**(1,178,354)**	**(1,131,038)**
Գործառնական գործունեության արդյունք		**288**	**950**
Ֆինանսական գործունեություն			
Ֆինանսական եկամուտներ		-	-
Ֆինանսական ծախսեր		-	-
Ֆինանսական գործունեության արդյունք		-	-
Շահույթ նախքան հարկումը		288	**950**
Շահութահարկ		(288)	(950)
Համապարփակ ֆինանսական արդյունք		-	-

Կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Տնօրեն
Բ. Ջամբազյան

Գլխավոր հաշվապահ
Հ. Ղափանճյան

3 մայիսի, 2021թ.

Կ.Տ.

Դրամական միջոցների հոսքերի հաշվետվություն

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	Ծանոթագր.	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Սկզբնական մնացորդ	10	**553,041**	**426,791**
Գործառնական գործունեություն			
Մուտքեր գործառնական գործունեությունից			
Ստացված նվիրատվություններ ու շնորհներ		1,279,679	1,098,444
Ապրանքների վաճառքից		1,952	1,905
Այլ մուտքեր		17,312	12,280
Ընդամենը մուտքեր գործառնական գործունեությունից		*1,298,943*	*1,112,629*
Ելքեր գործառնական գործունեությունից			
Ձեռքբերված ապրանքների ու նյութերի դիմաց		557,427	483,297
Ստացված աշխատանքների ու ծառայությունների դիմաց		144,385	110,289
Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ		159,528	160,070
Սոցիալական ապահովագրության վճարումներ		2,525	2,723
Հարկեր և այլ պարտադիր վճարներ		59,658	63,416
Դրամական օգնություններ		111,928	104,279
Այլ վճարներ		15,048	36,370
Ընդամենը ելքեր գործառնական գործունեությունից		*1,050,499*	*960,444*
Զուտ հոսքեր գործառնական գործունեությունից		**248,444**	**152,185**
Ներդրումային գործունեություն			
Մուտքեր ներդրումային գործունեությունից			
Հիմնական միջոցների իրացում		200	10,408
Փոխառությունների վերադարձ		-	-
Ընդամենը մուտքեր ներդրումային գործունեությունից		*200*	*10,408*
Ելքեր ներդրումային գործունեությունից			
Հիմնական միջոցների ձեռքբերում		108,040	32,703
Փոխառությունների տրամադրում		-	-
Ընդամենը ելքեր ներդրումային գործունեությունից		*108,040*	*32,703*
Զուտ հոսքեր ներդրումային գործունեությունից		**(107,840)**	**(22,295)**

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

(Շարունակություն)

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	Ծանոթագր.	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ֆինանսական գործունեություն			
Մուտքեր ֆինանսական գործունեությունից			
Վարկերի և փոխառությունների ստացում		-	-
Մուտքեր ֆինանսական այլ գործունեությունից		-	-
Ընդամենը մուտքեր ֆինանսական գործունեությունից		-	-
Ելքեր ֆինանսական գործունեությունից			
Վարկերի և փոխառությունների մարում		-	-
Ելքեր ֆինանսական այլ գործունեությունից		-	-
Ընդամենը ելքեր ֆինանսական գործունեությունից		-	-
Զուտ հոսքեր ֆինանսական գործունեությունից		-	-
Դրամական միջոցների փոփոխություն		140,604	129,890
Արտարժութային միջոցների փոխարժեքային տարբերության արդյունք		70,537	(3,640)
Դրամական միջոցների մնացորդը ժամանակաշրջանի վերջում	10	764,182	553,041

Կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Տնօրեն
Բ. Ջամբազյան

Գլխավոր հաշվապահ
Հ. Ղափանճյան

3 մայիսի, 2021թ.

Կ.Տ.

Ֆինանսական Հաշվետվություններին Կից Ծանոթագրություններ

1. Ընդհանուր տեղեկություններ

1.1 Իրավական կարգավիճակը

«Դիակոնիա» Բարեգործական Հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ) հիմնադրվել է Հայաստանում՝ Գերմանիայի Դաշնության քաղաքացի Բարույեր Ջամբազյանի, ՀՀ քաղաքացի Վազգեն Համբարձումյանի, Շվեյցարիայի քաղաքացի Բենյամին Մալգոյի, Շվեյցարիայի քաղաքացի Հանա-Ռուդոլֆ Հինթերմանի և ՀՀ քաղաքացի Աննա Ջամբազյանի կողմից 2001թ. հուլիսի 17-ին կայացած հիմնադիր ժողովի որոշմամբ:

Հիմնադրամի գործունեության և իրավաբանական հասցեն է՝
ՀՀ, ք. Երևան, Աշտարակի խճուղի, «Հույսի Ավան» թաղամաս:

Հիմնադրամի գործունեության նպատակներն են՝
- ՀՀ անապահով ընտանիքներին օգնության կազմակերպում,
- ՀՀ անապահով ընտանիքներին բնակարաններով ապահովում,
- ՀՀ գյուղական և քաղաքային համայնքներում բնակչության առողջապահական և սոցիալական պաշտպանությանն ուղղված ծրագրերի իրականացում:

Հիմնադրամի գործունեության առարկաներն են՝
- ՀՀ անապահով ընտանիքների համար բնակելի տների շինարարություն՝ «Հույսի Ավան» ծրագիր,
- Հիմնադրամի ծրագրերի իրականացման համար ֆինանսական, նյութական և այլ միջոցների հավաքագրում ու բաշխում,
- Հայաստանի ու արտասահմանյան լրատվական միջոցներով Հիմնադրամի գործունեության և նպատակների լուսաբանում ու գովազդ:

Հիմնադրամի կառավարման մարմիններն են՝ հոգաբարձուների խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ) և Հիմնադրամի կառավարիչը (այսուհետ՝ Տնօրեն):

Խորհուրդը
- ✓ Աննա Ջամբազյան
- ✓ Շաքար Դանիելյան
- ✓ Ահարոն Ղազարյան
- ✓ Քանարիկ Ջամբազյան

Հիմնադրամի Խորհրդի անդամներն իրենց պարտականությունները կատարում են անվարձահատույց և չեն հանդիսանում Հիմնադրամի շահառուներ:

Տնօրենը
Հիմնադրամի Տնօրենն է Բարույեր Ջամբազյանը:

Նախագահը
Հիմնադրամի Խորհրդի նախագահն է Աննա Ջամբազյանը:

Աշխատակազմը
Հիմնադրամի աշխատակիցների թիվը 2020թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում է 31 մարդ, որոնցից՝

- 10 վարչական աշխատակիցներ,
- 15 ծրագրային աշխատակիցներ,
- 6 տեխնիկական աշխատակիցներ,
- 1 այլ սպասարկող աշխատակից:

Հիմնադրամի շահառուները (այսուհետ՝ Շահառուներ) ՀՀ սոցիալապես անապահով խավերն են՝ բազմազավակ ընտանիքներ, երկկողմանի կամ միակողմանի ծնողազուրկ ընտանիքներ և այլ անապահով ընտանիքներ:

2020 թ-ին Հիմնադրամը իրականացրել է «Օժանդակություն ՀՀ և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքային և գյուղական համայնքների ազգաբնակչությանը» ծրագիրը, որը ՀՀ փոխվարչապետի 24.12.2019 թ-ի թիվ 943-Ա որոշմամբ որակվել է բարեգործական:

Հիմնադրամի կողմից իրականացվող «Հույսի Ավան» ծրագիրը ՀՀ Կառավարության կողմից դասակարգվել է որպես բարեգործական:

1.2 Արտաքին միջավայրը և Հիմնադրամի գործունեությունը

Հիմնադրամը իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում և նրա գործունեության վրա ուղղակի ազդեցություն ունեն Հայաստանի տնտեսական վիճակը և ֆինանսական շուկաները, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշները: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ և ենթակա են հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական ու ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, կարող է լրացուցիչ բարդություններ ստեղծել Հայաստանում գործող կազմակերպությունների համար:

Ինչպես դիտվել է նախկինում, փաստացի կամ թվացյալ ֆինանսական խնդիրները կամ ներդրումների հետ կապված հնարավոր ռիսկերը հաճախ բացասական ազդեցություն են ունենում Հայաստանի ներդրումային միջավայրի և նրա տնտեսության ընդհանուր վիճակի վրա: Հիմնադրամի ակտիվների վրա բացասական ազդեցություն կարող են ունենալ ընդհանուր տնտեսական վիճակը, օրենսդրական և աշխարհաքաղաքական փոփոխությունները, որոնք բոլորն էլ ունեն ակտիվների գնահատման, ներդրողների ընդհանուր տրամադրվածության և որոշումների կայացման վրա ուղղակի ազդեցություն: Այս ամենը դուրս է Հիմնադրամի վերահսկողությունից:

Երկրի ապագա տնտեսական զարգացման հիմնական ուղղության վրա իրավական, կանոնակարգման և քաղաքական զարգացման հետ միասին զգալիորեն ազդում են կառավարության կողմից ընդունված հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունները: Ղեկավարությունը հնարավորություն չունի կանխատեսել բոլոր ապագա զարգացումները, որոնք կարող են ազդեցություն ունենալ տնտեսության վրա: Հետևաբար չի կարող կանխատեսել նաև դրանց հետևանքային ազդեցությունը Հիմնադրամի զուտ ակտիվների արժեքի փոփոխության վրա: Ներկայացված ֆինանսական հաշվետվությունները արտացոլում են ընթացիկ գործառնական և բիզնես միջավայրի ազդեցությունը Հիմնադրամի գործունեության և ֆինանսական արդյունքների վրա: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատումներից:

Տես նաև ծանոթագրություն 21:

2. Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (այսուհետ՝ ՀՀՄՍԽ) և Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից հաստատված Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների (այսուհետ՝ ՖՀՄՍ) համաձայն:

Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ-ի համաձայն ներկայացնելու նպատակով ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում ներկայացվել են լրացուցիչ բացահայտումներ:

2.2 Ճանաչման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով:

Ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է Հիմնադրամի՝ 2020 թ-ի դեկտեմբերի 31-ի և 2019 թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ (համեմատական ամենավաղ տեղեկատվություն) ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս:

Հիմնադրամն իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը ՖՀՄՍ-ի համաձայն պատրաստելիս կիրառել է հետևյալ մոտեցումները.

- ✓ չի ճանաչել հոդվածները որպես ակտիվ կամ պարտավորություն, եթե ՖՀՄՍ-ով թույլ չի տրվում այդպիսի ճանաչում,
- ✓ ճանաչել է այն ակտիվներն ու պարտավորությունները, որոնց ճանաչումը պահանջվում է ՖՀՄՍ-ով,
- ✓ ՖՀՄՍ-ն կիրառվել է բոլոր ճանաչված ակտիվները և պարտավորությունները չափելիս:

2.3 Ղեկավարության գնահատումներ և դատողություններ

ՖՀՄՍ-ների պահանջով ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ընթացքում Հիմնադրամի ղեկավարությունը կատարում է գնահատումներ, կանխատեսումներ և ենթադրություններ ապագա ժամանակաշրջանների վերաբերյալ: Այդ դատողությունները կիրառվում են ֆինանսական հաշվետվությունների ակտիվների ու պարտավորությունների չափման ժամանակ: Գնահատումներն ու դատողությունները մշտապես վերանայվում են՝ հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, ինչպես նաև ապագա իրադարձությունների վերաբերյալ ողջամիտ ակնկալիքների վրա: Այդուհանդերձ, փաստացի փորձը կարող է տարբերվել կատարված գնահատումներից և ենթադրություններից:
Ստորև ներկայացված են այն գնահատումները և ենթադրությունները, որոնք պարունակում են զգալի ռիսկ, քանի որ հաջորդ ֆինանսական տարում կարող են ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների էական ճշգրտումների պատճառ հանդիսանալ:

Գնահատումներ և ենթադրություններ՝ իրական արժեքի չափում

Մի շարք ակտիվներ և պարտավորություններ պահանջվում է չափել իրական արժեքով, կամ բացահայտել դրանց իրական արժեքը ֆինանսական հաշվետվություններում:
Հիմնադրամի ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների իրական արժեքի չափման համար հնարավորինս օգտագործվում են շուկայական տվյալներ: Իրական արժեքի չափման համար օգտագործվող ելակետային տվյալները դասակարգվում են ըստ տարբեր մակարդակների՝ կախված նրանից, թե որքանով են գնահատման մեթոդի մեջ օգտագործվող տվյալները դիտելի:

1. Նույնական ակտիվի կամ պարտավորության համար ակտիվ շուկաներում գնանշվող գներ (չճշգրտված);
2. Ուղղակի կամ անուղղակի դիտելի ելակետային տվյալներ՝ բացառությամբ 1. կետում ներառվող գնանշվող գներից;
3. Ոչ դիտելի ելակետային տվյալներ՝ շուկայական տվյալների վրա չհիմնված:

Ակտիվների և պարտավորությունների դասակարգումը հիմնվում է ամենացածր արժեքի ելակետային տվյալների վրա, որոնք ունեն զգալի ազդեցություն իրական արժեքի չափման գործում: Հաշվապահական գնահատումների արդյունքները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք տեղի են ունենում:

2.4 Գործառնական և հաշվետվությունների ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետությունում գործառնական արժույթը ՀՀ դրամն է, որն էլ հանդիսանում է Հիմնադրամի գործառնական արժույթը:
Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով: Ղեկավարության համոզմամբ՝ այն լավագույնս է արտացոլում ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձություններն ու գործարքների տնտեսական էությունը և ամենահարմարն է Հիմնադրամի ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար:
ՀՀ դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.5 Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում

Հիմնադրամը որոշել է պատրաստել համապարփակ ֆինանսական արդյունքների մասին մեկ հաշվետվություն՝ ենթագումարներով երկու առանձին հաշվետվությունների (ֆինանսական արդյունքների մասին առանձին հաշվետվություն, որին հետևում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն) փոխարեն:

2.6 Նոր և վերանայված ՖՀՄՍ ստանդարտներ, որոնք կիրառելի են ընթացիկ տարվա համար

Ստորև ներկայացված նոր և վերանայված ՖՀՄՍ-ների կիրառման ազդեցությունը կրում է զուտ ցուցադրական բնույթ: Կազմակերպությունները պետք է վերլուծեն այս նոր և վերանայված ՖՀՄՍ-ների կիրառման ազդեցությունը ֆինանսական հաշվետվությունների վրա՝ հիմք ընդունելով հատուկ փաստեր և հանգամանքներ, և կատարեն համապատասխան բացահայտումներ:

Հիմնադրամը ընդունել է իր գործունեության համար կիրառելի և արդեն ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարկվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) և ՀՀՄՍԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից:

01.01.2019թ-ից ուժի մեջ մտած՝ ՖՀՄՍ 16 «Վարձակալություն» ստանդարտը և ՖՀՄՍԽ-ՄԿ «Եկամտահարկի հաշվառման մոտեցման անորոշություն» մեկնաբանությունը նշանակալի ազդեցություն չունեն Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա:

Վարձակալության վճարների զիջումներ

2020թ-ի մայիսի 28-ին ՀՀՄՍԽ-ն թողարկել է COVID-19-ի հետ կապված վարձակալության վճարների զիջումներ՝ ՖՀՄՍ 16 Վարձակալություններ ստանդարտում փոփոխությունը: Խորհուրդը փոփոխել է ստանդարտը՝ վարձակալներին ազատելով կորոնավիրուսային համավարակի անմիջական հետևանք հանդիսացող վարձակալության վճարների զիջմամբ պայմանավորված վարձակալության վերափոխումների հաշվառման վերաբերյալ ՖՀՄՍ 16-ի ուղեցույցի կիրառումից: Օժանդակությունը նախատեսված չէ վարձատուների համար: Որպես գործնական մոտեցում վարձակալը կարող է ընտրել՝ չգնահատել՝ արդյոք կորոնավիրուսային համավարակով պայմանավորված վարձավճարի զիջումը վարձակալության պայմանագրի վերափոխում է, թե ոչ: Նման ընտրություն իրականացրած վարձակալը հաշվառում է կորոնավիրուսային համավարակի հետևանքով վարձակալության վճարի զիջման հետ կապված ցանկացած փոփոխություն այնպես, ինչպես կհաշվառեր փոփոխությունը համաձայն ՖՀՄՍ 16-ի, եթե այն չլիներ վարձակալության վերափոխում: Այս մոտեցումը կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ վարձավճարների զիջումը տեղի է ունենում որպես կորոնավիրուսային համավարակի ուղղակի հետևանք, և եթե բավարարված են ստորև նշված բոլոր պայմանները՝

- վարձակալության վճարների փոփոխությունը հանգեցնում է վարձակալության վերանայված հատուցման, որն ըստ էության նույնն է կամ ավելի ցածր է, քան փոփոխությանը անմիջապես նախորդող վարձակալության հատուցումը.
- վարձակալական վճարների ցանկացած կրճատում ազդում է միայն այն վարձավճարների վրա, որոնց վճարումները նախատեսված են 2021թ-ի հունիսի 30-ին կամ դրանից շուտ (օրինակ՝ վարձակալության վճարի զիջումը կարող է բավարարել այս պայմանին, եթե այն հանգեցնում է վարձակալության վճարների կրճատման մինչև 2021թ-ի հունիսի 30-ը և վարձակալության վճարների հետագա աճի 2021թ-ի հունիսի 30-ից հետո).
- Վարձակալության պայմանագրի այլ դրույթներում և պայմաններում բովանդակային փոփոխություններ տեղի չեն ունեցել:

Բացառության կիրառումը վարձակալի կողմից թույլատրվում է, բայց չի պարտադրվում:

Վարձակալության վճարների զիջումների հաշվառումը, որոնք հաշվառված չեն որպես վարձակալության վերափոխումներ

ՖՀՄՍ 16-ի փոփոխությունը հստակ ուղեցույց չի տալիս այն մասին, թե ինչպես է վարձակալը հաշվառում վարձակալության վճարի զիջումը՝ նկարագրված մոտեցումը կիրառելիս: Նշվում է, որ ընտրություն կատարելիս վարձակալը վարձակալության վճարների ցանկացած փոփոխություն, որն առաջացել է կորոնավիրուսային համավարակի հետ կապված վարձավճարների զիջումից, հաշվառում է նույն կերպ, ինչպես կհաշվառեր փոփոխությունը

ՖՀՄՍ 16-ի համաձայն, եթե փոփոխությունը չլիներ վարձակալության վերափոխում: Կան որպես վարձակալության վերափոխում չհաշվառվող վարձակալության վճարի զիջման մի քանի հնարավոր մոտեցումներ, այդ թվում.

1. Վարձակալության վճարների ներման կամ հետաձգման ձևով զիջման հաշվառում՝ որպես բացասական փոփոխական վարձակալության վճար,
2. Վարձակալության վճարների ներման կամ հետաձգման ձևով զիջման հաշվառում՝ որպես պայմանական չափանիշի բավարարում, որը ֆիքսում է նախկին փոփոխական վարձակալության վճարները,
3. Վճարների հետաձգման ձևով զիջման հաշվառում այնպես, կարծես վարձակալությունը փոփոխված չէ:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը

3.1 Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում

Ասոցիացված կազմակերպություններում ներդրումներից շահաբաժինների եկամուտը ճանաչվում է, երբ հաստատվում է Հիմնադրամի՝ վճարումներ ստանալու իրավունքները: Այն ներառված է այլ եկամուտներում:

3.2 Հասույթի ճանաչումը

Հիմնադրամը իր կանոնադրական նպատակների իրականացման շրջանակներում մատուցվող ծառայություններից կարող է ունենալ հասույթ, որը ճանաչվում է, երբ Հիմնադրամը կատարել է աշխատանքները, և ծառայություններ ստացողը ճանաչում է դա: Հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք իրական արժեքով՝ զտված զեղչերից և իրացման հետ կապված հարկերից:

Մատուցված ծառայություններից (եթե կան այդպիսիք) ստացված հասույթը ճանաչվելու է, երբ բավարարվեն հետևյալ պայմանները.

- Հիմնադրամը ծառայություններ ստացողին է փոխանցել աշխատանքների արդյունքները,
- Հիմնադրամը չի պահպանում իր կառավարման մասնակցությունը՝ մատուցված ծառայությունների արդյունքների հետագա օգտագործման նկատմամբ,
- հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը,
- հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները հոսեն Հիմնադրամ,
- հնարավոր է արժանահավատորեն չափել գործարքի հետ կապված կատարված կամ կատարվելիք ծախսերը:

3.3 Փոխառության ծախսեր

Փոխառության բոլոր ծախսերը ճանաչվում են այն ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում, որի ընթացքում տեղի են ունեցել այդ ծախսերը:

3.4 Հիմնական միջոցներ և կենսաբանական ակտիվներ

Հիմնական միջոցները և կենսաբանական ակտիվները ի սկզբանե հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունն ու արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման կամ կառուցման գինը, ներկրման տուրքերը, հարկերը և պարտադիր այլ վճարները, որոնք ենթակա չեն վերադարձման, և այդ հիմնական միջոցին ուղղակիորեն վերագրվող այլ ծախսումները:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի ու ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Մաշվածությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում:

Ըստ դասերի՝ հիմնական միջոցների և կենսաբանական ակտիվների գնահատված օգտակար ծառայության ժամկետները հետևյալն են.

Շենքեր և շինություններ	-	20 տարի
Մեքենասարքավորումներ	-	5 տարի
Տնտեսական և գրասենյակային գույք	-	5 տարի
Տրանսպորտային միջոցներ	-	5 տարի
Կենսաբանական ակտիվներ	-	5 տարի

Եթե կա որևէ հայտանիշ, որ տեղի է ունեցել ակտիվի մաշվածության դրույքաչափի, օգտակար ծառայության կամ մնացորդային արժեքի էական փոփոխություն, ապա տվյալ ակտիվի մաշվածությունը վերանայվում է այնպես, որ ապագայում ճիշտ արտացոլի նոր ակնկալիքները:

Ակտիվների վրա կատարված ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են այդ հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները՝ ներառյալ վերանորոգման ու պահպանման, ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություններում՝ դրանց կատարման ժամանակաշրջանում: Վարձակալված հիմնական միջոցների վրա կատարված կապիտալ վերանորոգման ծախսերը կապիտալացվում են և հիմնական միջոցների կազմում ներկայացվում են առանձին դասով: Դրանց նկատմամբ հաշվարկվում է մաշվածություն, օգտակար ծառայության ժամկետ է հանդիսանում վարձակալության ժամկետը:

3.5 Ներդրումային գույք

Ակտիվը՝ հող կամ շենք, որը պահվում է սեփականատիրոջ մոտ, ճանաչվում է որպես ներդրումային գույք՝ վարձակալությունից եկամուտ վաստակելու կամ դրա արժեքի աճի, կամ էլ միաժամանակ այդ երկու նպատակներով:

Ներդրումային գույքը առաջացնում է դրամական միջոցների հոսքեր, որոնք մեծապես անկախ են կազմակերպության կողմից պահվող այլ ակտիվներից:

Կազմակերպությունն իր ամբողջ ներդրումային գույքը (բացառությամբ այն գույքի, որը համապատասխանում է վաճառքի համար պահվող դասակարգվելու չափանիշին) չափում է ինքնարժեքով (սկզբնական արժեքով)՝ ներառելով գործառնության հետ կապված ծախսումները: Գնված ներդրումային գույքի ինքնարժեքը ներառում է դրա գնման գինը և գույքի ձեռքբերմանն ուղղակիորեն վերագրելի ցանկացած ծախսում:

Ներդրումային գույքի (բացառությամբ այն գույքի, որը համապատասխանում է վաճառքի համար պահվող դասակարգվելու չափանիշին) մաշվածությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը:

3.6 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները սահմանվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Դրանք ամորտիզացվում են իրենց օգտակար ծառայության ընթացքում՝ կիրառելով ուղղագծային մեթոդը: Եթե կա որևէ հայտանիշ, որ տեղի է ունեցել ոչ նյութական ակտիվի ամորտիզացիայի դրույքաչափի, օգտակար ծառայության կամ մնացորդային արժեքի էական փոփոխություն, ապա ամորտիզացիան պետք է վերանայվի այնպես, որ արտացոլի նոր ակնկալիքները:

3.7 Ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Հիմնադրամի հիմնական միջոցները, ոչ նյութական ակտիվները վերանայվում են՝ պարզելու, թե կա արդյոք որևէ հայտանիշ, որ տվյալ ակտիվները կրել են արժեզրկումից կորուստներ: Եթե առկա է հնարավոր արժեզրկման որևէ հայտանիշ, ապա արժեզրկվող ակտիվի (կամ կից ակտիվների խումբ) փոխհատուցվող գումարը գնահատվում է և համեմատվում հաշվեկշռային արժեքի հետ: Եթե գնահատված փոխհատուցվող գումարը ավելի ցածր է հաշվեկշռային արժեքից, ապա հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև գնահատված փոխհատուցվող գումար, իսկ արժեզրկումից կորուստը անմիջապես ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Նույն կերպ յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ պաշարները գնահատվում են՝ պաշարների յուրաքանչյուր հոդվածի (կամ համանման հոդվածների խմբի) հաշվեկշռային արժեքը դրա վաճառքի գնի, հանած համալրման և վաճառքի ծախսումները, հետ համեմատելով: Եթե պաշարների որևէ հոդված (կամ համանման հոդվածների խումբը) արժեզրկվել է, ապա հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև վաճառքի գին՝ հանած համալրման ու վաճառքի ծախսումները, իսկ արժեզրկումից կորուստն անմիջապես ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Եթե արժեզրկումից կորուստը համապատասխանաբար հակադարձվում է, ապա ակտիվի (կամ կից ակտիվների խմբի) հաշվեկշռային արժեքը ավելացվում է մինչև դրա փոխհատուցվող գումարի վերանայված, գնահատված արժեքը (պաշարների դեպքում՝ վաճառքի գին՝ հանած համալրման և վաճառքի ծախսումները), բայց այնպես, որ ավելացված արժեքը չգերազանցի այն գումարը, որը սահմանված կլիներ, եթե ակտիվի (կից ակտիվների խմբի) արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ նախորդ տարիների համար: Արժեզրկումից կորստի հակադարձումը անմիջապես ճանաչվում է շահույթում կամ վնասում:

3.8 Վարձակալություններ

Վարձակալությունը դասակարգվում է որպես՝ ֆինանսական բոլոր այն դեպքերում, երբ փոխանցվում են վարձակալված ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները: Մնացած բոլոր վարձակալությունները դասակարգված են որպես գործառնական վարձակալություն:
Ֆինանսական վարձակալությամբ պահվող ակտիվների նկատմամբ իրավունքները ճանաչվում են որպես ակտիվներ՝ վարձակալված գույքի իրական արժեքին հավասար գումարով (կամ եթե ավելի ցածր է, նվազագույն վարձավճարների ներկա արժեքով)՝ վարձակալության սկզբի դրությամբ: Վարձատուի նկատմամբ ունեցած համապատասխան

ֆինանսական պարտավորությունը ներառվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ՝ որպես ֆինանսական վարձակալության գծով պարտավորություն: Վարձավճարները հավասարապես բաշխվում են ֆինանսական վճարի և չվճարված պարտավորության նվազեցման միջև այնպես, որ ստացվի հաստատուն տոկոսադրույք ժամանակաշրջանի պարտավորության մնացորդի նկատմամբ: Ֆինանսական վճարները պահվում են շահույթի կամ վնասի չափումից: Ֆինանսական վճարները ներառված են հիմնական միջոցների մեջ, որոնք մաշվում և գնահատվում են ճիշտ այնպես, ինչպես սեփական ակտիվները:

Գործառնական վարձակալության շրջանակներում վճարվելիք վարձավճարները հաշվվում են շահույթում կամ վնասում՝ վարձակալության տևողության նկատմամբ գծային հիմունքով:

3.9 Պաշարներ

Պաշարները չափվում են սկզբնական արժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով:

Պաշարների սկզբնական արժեքը ներառում է պաշարների ձեռքբերման և արտադրման ծախսերը, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին ու գտնվելու վայր հասցնելու հետ կապված այլ ծախսերը:

Իրացման զուտ արժեքը՝ վաճառքի ենթադրվող գինն է՝ հանած համալրման (վերանորոգման) ենթադրվող ծախսումները, ինչպես նաև վաճառքի կազմակերպման համար անհրաժեշտ ենթադրվող ծախսումները: Իրացման զուտ արժեքի գնահատումները հիմնվում են պաշարների իրացումից սպասվելիք գումարի՝ գնահատման պահին հասանելի առավել արժանահավատ վկայության վրա: Այդ գնահատումները կատարելիս հաշվի են առնվում հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տեղի ունեցած դեպքերի հետ ուղղակիորեն կապված գների կամ ծախսումների տատանումներն այնքանով, որքանով նման դեպքերը հաստատում են ժամանակաշրջանի վերջի դրությամբ առկա պայմանները:

Հիմնադրամը ճշգրտում է պաշարների արժեքը մինչև վերականգնվող արժեք՝ դանդաղ շրջանառելի և վնասված պաշարների համար ստեղծելով «Ապրանքանյութական պաշարների փչացման ու հնացման» պահուստ:

3.10 Ֆինանսական գործիքներ

Ֆինանսական ակտիվները կամ ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Հիմնադրամը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ երբ փոխանցվում են ֆինանսական ակտիվները, բոլոր նշանակալից ռիսկերն ու հատուցումները:

Ֆինանսական պարտավորություններն ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել, կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը: Ֆինանսական ակտիվները կամ ֆինանսական պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները՝ բացառությամբ այն ֆինանսական ակտիվների ու ֆինանսական պարտավորությունների, որոնց իրական արժեքի փոփոխությունները վերագրվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությանը, որոնք սկզբնապես չափվում են իրական արժեքով:

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ արտացոլվելով զուտ գումարով, միայն այն դեպքում, եթե Հիմնադրամն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն:

Ֆինանսական ակտիվների ու ֆինանսական պարտավորությունների հետագա չափումը ներկայացված է ստորև:

Ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների, բաժանվում են հետևյալ կատեգորիաների՝

- ✓ փոխառություններ և դեբիտորական պարտքեր,
- ✓ ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- ✓ վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ,
- ✓ մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ:

Ֆինանսական ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ վերագրվում են տարբեր կատեգորիաների՝ կախված գործիքի բնույթից և նպատակից: Ֆինանսական գործիքի կատեգորիան համապատասխանում է այն սկզբունքին, որով չափվում է տվյալ գործիքը, և որը ցույց է տալիս, թե իրական արժեքի փոփոխության արդյունքում ստացվող օգուտներն ու վնասները պետք է ճանաչվեն համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում: Հիմնադրամի ֆինանսական ակտիվները, ըստ կատեգորիաների, ներկայացված են ծանոթագրություններում:

Ընդհանուր առմամբ, Հիմնադրամի բոլոր ֆինանսական ակտիվները ճանաչվում են՝ օգտագործելով վերջնահաշվարկի ամսաթվի հաշվառումը: Ֆինանսական ակտիվի արժեզրկման գնահատումն իրականացվում է առնվազն յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ: Ֆինանսական ակտիվների հետ կապված բոլոր ծախսերը և եկամուտները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ համապատասխանաբար «Ֆինանսական ծախս» և «Ֆինանսական եկամուտ» հոդվածներում:

➢ <u>Դեբիտորական պարտքեր</u>

Ընթացիկ դեբիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով: Հետագայում դրանք հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ հանած արժեզրկման պահուստը: Դեբիտորական պարտքերի արժեզրկման պահուստը ստեղծվում է այն ժամանակ, երբ առկա է օբյեկտիվ ապացույց, որ Հիմնադրամը սկզբնապես սահմանված ժամկետներում չի կարող հավաքագրել վերադարձման ենթակա բոլոր գումարները: Դեբիտորի զգալի ֆինանսական դժվարությունները, վճարման հետաձգումը և ժամանակին չվճարումը (365 օրից ավել) ցուցանիշ են այն բանի, որ դեբիտորական պարտքն արժեզրկված է: Պահուստի գումարը ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի տարբերությունն է:

Պահուստի մնացորդը ճշգրտվում է հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ ծախսի կամ եկամտի ճանաչման միջոցով: Հաճախորդի հաշվի մնացորդից դուրս գրվող ցանկացած գումար նվազեցվում է առկա կասկածելի դեբիտորական պարտքի պահուստից: Բոլոր դեբիտորական պարտքերը, որոնց հավաքագրումը գնահատվում է որպես անհավանական, դուրս են գրվում:

➢ <u>Մնացորդներ դրամարկղում և բանկում</u>

Դրամական միջոցները՝ դրամարկղում կանխիկ միջոցներն են, բանկային հաշիվների մնացորդները, ինչպես նաև կարող են լինել ցպահանջ ավանդներ (բանկային հաշիվների մնացորդներ) և դրամական միջոցների համարժեքներ (կարճաժամկետ, բարձր իրացվելի ներդրումներ, որոնք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ):

Ֆինանսական պարտավորություններ

Հիմնադրամի ֆինանսական պարտավորությունները կարող են ներառել փոխառություններ, կրեդիտորական պարտքեր՝ ներառյալ ֆինանսական վարձակալության գծով պարտավորություններ, որոնք հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Հիմնադրամի ֆինանսական պարտավորությունները ներկայացված են ծանոթագրություններում:

➢ <u>Վարկեր և փոխառություններ</u>

Վարկերը և փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ առանց գործարքային ծախսերի: Սկզբնական ճանաչումից հետո վարկերը և փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով, իսկ այդ արժեքի և մարման արժեքի միջև տարբերությունը փոխառության ժամկետի ընթացքում ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Տոկոսավճարները և փոխառությունների հետ կապված այլ ծախսերը ծախսագրվում են կատարմանը զուգահեռ՝ որպես ֆինանսական ծախսերի մի մաս, բացի որակավորվող ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանն ուղղակիորեն վերագրվող փոխառության ծախսումներից, որոնք կապիտալացվում են որպես այդ ակտիվի արժեքի մաս:

<u>Կրեդիտորական պարտքեր</u>

Կրեդիտորական պարքերը պարտավորություններ են, որոնք հաշվվում են վճարման սովորական պայմաններով և չեն կրում տոկոսներ: Արտարժույթով առևտրային կրեդիտորական պարտքերը վերածնակերպվում են տեղական արժույթով՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ սահմանված փոխարժեքը: Արտարժույթի փոխարկումից օգուտները կամ վնասները ներառվում են այլ եկամուտներում կամ այլ ծախսերում:
Կրեդիտորական պարտքերը ի սկզբանե ճանաչվում են իրական արժեքով, իսկ հետագայում՝ ամորտիզացված արժեքով:

3.11 Սեփական կապիտալ

Հիմնադրամը չունի թողարկվող կապիտալի գործիքներ, և համաձայն «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի՝ հոգաբարձուները չեն կարող ունենալ նրա շահույթից բաշխման ակնկալիքներ:

3.12 Հարկեր

Շահութահարկի գծով ծախսը ներառում է ընթացիկ հարկի գծով պարտավորությունը և հետաձգված հարկը:

Ընթացիկ հարկ

Ընթացիկ հարկի գծով պարտավորությունը հիմնված է ժամանակահատվածի հարկվող շահույթի վրա: Հարկվող շահույթը տարբերվում է «շահույթ մինչև հարկումը» հասկացությունից՝ եկամտի և ծախսի այնպիսի տարրերի պատճառով, որոնք հարկման կամ նվազեցման ենթակա են այլ հաշվետու ժամանակաշրջաններում, ինչպես նաև այն տարրերի, որոնք երբևէ չեն հարկվելու կամ նվազեցվելու: Հիմնադրանի ընթացիկ հարկային պարտավորությունները հաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ուժի մեջ մտած կամ, ըստ էության, ուժի մեջ մտած հարկի դրույքաչափերը:

Հետաձգված հարկ

Հետաձգված հարկերը ճանաչվում են ժամանակավոր տարբերությունների գծով, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների և հարկման բազաների միջև:

Հետաձգված հարկային պարտավորությունները ընդհանուր առմամբ ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկային ակտիվները ընդհանուր առմամբ ճանաչվում են բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով միայն այն չափով որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունները: Նմանատիպ հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չեն ճանաչվում այն ժամանակավոր տարբերությունների համար, որոնք առաջանում են ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչման պահին (բացառությամբ գործարար միավորումների) այնպիսի գործարքների արդյունքում, որոնք ազդեցություն չունեն ինչպես հաշվապահական, այնպես էլ հարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում այն չափով, որով այլևս հավանական չէ, որ կստացվի բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային պարտավորությունները և ակտիվները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային օրենքները), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք կառաջանան՝ կախված այն եղանակից, որով Հիմնադրամը հաշվետու ժամանակաշրջանի վերջում ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

Տարվա ընթացիկ և հետաձգված հարկեր

Ընթացիկ և հետաձգված հարկերը ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք վերաբերում են տարրերի, որոնք ճանաչվել են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում: Նման դեպքում ընթացիկ և հետաձգված հարկերը նույնպես ճանաչվում են համապատասխանաբար այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում:

Հիմնադրամի հարկումը

Հիմնադրամը իր կանոնադրական գործունեության մասով ազատված է հարկերից, իսկ ձեռնարկատիրական գործունեության մասով հարկվում է շահութահարկով և հարկման շեմը գերազանցելու դեպքում՝ ավելացված արժեքի հարկով:

3.13 Պահուստներ

Պահուստները ճանաչվում են, երբ Հիմնադրամը պարտավորություն է կրում (իրավական կամ փաստացի), որպես անցյալ դեպքերի արդյունք և հավանական է, որ Հիմնադրամից կպահանջվի կատարել պարտականությունը և այդ պարտավորության գումարը արժանահավատորեն կարող է չափվել:

Պահուստում ճանաչված գումարն իրենից ներկայացնում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ լավագույն գնահատականը, որը կպահանջվի ներկա պարտավորությունը մարելու համար՝ հաշվի առնելով հարակից ռիսկերը և անորոշությունները: Եթե պահուստը չափվում է՝ օգտագործելով ներկա պարտավորության մարման համար գնահատված դրամական հոսքերը, ապա դրա հաշվեկշռային արժեքն իրենից ներկայացնում է այդ դրամական հոսքերի ներկա արժեքը (այն դեպքերում, եթե ժամանակի մեջ դրամի ազդեցությունն էական է):

Եթե ակնկալվում է, որ որևէ այլ կողմ ամբողջությամբ կամ մասամբ փոխհատուցելու է պահուստը մարելու համար պահանջվող ծախսումները, ապա փոխհատուցումը պետք է դիտվի որպես առանձին ակտիվ, երբ ըստ էության որոշակի է, որ փոխհատուցումը կստացվի և փոխհատուցման գումարը կարող է արժանահավատորեն չափվել:

Աշխատակիցների չօգտագործված արձակուրդային գումարների չափով ստեղծված պահուստը ճանաչվում է հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ ծախսի կամ եկամտի ճշգրտման միջոցով:

3.14 Արտարժույթ

Արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվել են ՀՀ դրամով՝ կիրառելով հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ ԿԲ կողմից սահմանված միջին հաշվարկային փոխարժեքները.

Արտարժույթի տեսակ	31.12.2020 թ-ի դրությամբ	31.12.2019 թ-ի դրությամբ
1 ԱՄՆ դոլար	522.59 ՀՀ դրամ	479.70 ՀՀ դրամ
1 Եվրո	641.11 ՀՀ դրամ	537.26 ՀՀ դրամ
1 Շվեցարական Ֆրանկ	590.83 ՀՀ դրամ	493.16 ՀՀ դրամ
1 Ռուսական ռուբլի	7.02 ՀՀ դրամ	7.77 ՀՀ դրամ

Արտարժութային գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության մեջ որպես այլ եկամուտ կամ ծախս:

4. Հիմնական միջոցներ

ՀՀ հազ. դրամներով	Շենքեր և շինություններ	Սարքավորումներ	Տնտեսական գույք	Տրանսպորտային միջոցներ	Անավարտ հ/մ	Ընդամենը
Արժեք						
31 դեկտեմբերի 2019	**2,218,383**	**19,771**	**80,641**	**29,846**	**31,455**	**2,380,096**
Ավելացումներ	59,273	4,869	53,657	24,503	-	142,302
Պակասեցումներ	-	1,743	10,436	-	-	12,179
31 դեկտեմբերի 2020	**2,277,656**	**22,897**	**123,862**	**54,349**	**31,455**	**2,510,219**
Կուտակված մաշվածք						
31 դեկտեմբերի 2019	**1,325,747**	**19,682**	**63,499**	**18,737**	-	**1,427,665**
Տարվա հատկացումներ	129,553	184	9,793	3,527	-	143,057
Պակասեցումներ	-	1,743	9,346	-	-	11,089
31 դեկտեմբերի 2020	**1,455,300**	**18,123**	**63,946**	**22,264**	-	**1,559,633**
Հաշվեկշռային արժեք						
31 դեկտեմբերի 2019	**892,636**	**89**	**17,142**	**11,109**	**31,455**	**952,431**
31 դեկտեմբերի 2020	**822,356**	**4,774**	**59,916**	**32,085**	**31,455**	**950,586**

31.12.2020 թ-ի դրությամբ Հիմնադրամը գրավադրված ակտիվներ չունի:

5. Կենսաբանական ակտիվներ

ՀՀ հազ. դրամներով	Կաթնամսատու անասուններ	Պտղատու այգիներ	Ընդամենը
Արժեք			
31 դեկտեմբերի 2019	**5,440**	-	**5,440**
Ավելացումներ	4,980	24,150	**29,130**
Պակասեցումներ	2,700	-	**2,700**
31 դեկտեմբերի 2020	**7,720**	**24,150**	**31,870**
Կուտակված մաշվածք			
31 դեկտեմբերի 2019	**2,048**	-	**2,048**
Տարվա հատկացումներ	1,576	528	**2,104**
Պակասեցումներ	1,479	-	**1,479**
31 դեկտեմբերի 2020	**2,145**	**528**	**2,673**
Հաշվեկշռային արժեք			
31 դեկտեմբերի 2019	**3,392**	-	**3,392**
31 դեկտեմբերի 2020	**5,575**	**23,622**	**29,197**

6. Ոչ նյութական ակտիվներ

ՀՀ հազ. դրամներով	Ճարտարապետական նախագիծ [1]	Համակարգչային ծրագրեր	Ընդամենը
Արժեք			
31 դեկտեմբերի 2019	59,545	4,207	63,752
Ավելացումներ	-	-	-
Պակասեցումներ	-	-	-
31 դեկտեմբերի 2020	59,545	4,207	63,752
Կուտակված մաշվածք			
31 դեկտեմբերի 2019	10,721	2,946	13,667
Տարվա հատկացումներ	1,191	421	1,612
Պակասեցումներ	-	-	-
31 դեկտեմբերի 2020	11,912	3,367	15,279
Հաշվեկշռային արժեք			
31 դեկտեմբերի 2019	48,824	1,261	50,085
31 դեկտեմբերի 2020	47,633	840	48,473

[1] Հույսի Ավան թաղամասի ճարտարապետաշինարարական նախագիծը ճանաչվել է որպես ոչ նյութական ակտիվներ:

7. Ապրանքանյութական պաշարներ

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	Հումք և նյութեր	Ապրանքներ	Արտադրանք	Այլ ապրանքներ	Ընդամենը [1]
31 դեկտեմբեր 2019	4,356	116,364	-	255	120,975
31 դեկտեմբեր 2020	2,311	54,286	7,189	1,826	65,612

[1] Ապրանքանյութական պաշարների մնացորդը զեղչված է ապրանքանյութական պաշարների հնացման և փչացման պահուստի չափով (տես ծանոթագրություն 8):

8. Ապրանքանյութական պաշարների հնացման պահուստ

Հիմնադրամը ստեղծել է ապրանքանյութական պաշարների հնացման ու փչացման պահուստ, որը յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար վերանայվում է: 2020 թ-ին պահուստի չափը չի փոփոխվել՝ այն կազմում է 1,200 հազ. դրամ: Պահուստին մասհանման ժամանակաշրջանում այդ գումարները ճանաչվել է որպես այլ ծախս:

9. Դեբիտորական, կրեդիտորական պարտքեր և կանխավճարներ

9.1 Դեբիտորական պարտքեր և տրված կանխավճարներ

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դեբիտորական պարտքեր իրացումների գծով	200	400
Դեբիտորական պարտքեր բյուջեին	829	1,524
Այլ ընթացիկ դեբիտորական պարտքեր	1,580	1,198
Ընդամենը	**2,609**	**3,122**
Տրված կանխավճարներ	**31,570**	**2,007**

9.2 Կրեդիտորական պարտքեր

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կրեդիտորական պարտքեր մատակարարներին	1,976	1,355
Կրեդիտորական պարտքեր բյուջեին	1,775	3,857
Կրեդիտորական պարտքեր սոցապ հատկացումների գծով	71	-
Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի գծով	9,935	8,875
Կրեդիտորական պարտքեր առհաշիվ գումարների գծով	-	334
Այլ կրեդիտորական պարտքեր	110	116
Ընդամենը	**13,867**	**14,537**

10. Դրամական միջոցներ

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31- ի դրությամբ
Կանխիկ		
ՀՀ դրամ	2,756	3,969
Հաշվարկային հաշիվ		
ՀՀ դրամ	371,787	131,637
Արտարժույթ	389,639	417,435
Ընդամենը	**764,182**	**553,041**

11. Շնորհներ

31.12.2020 թ. դրությամբ Հիմնադրամի 1,028,256 հազ. դրամի ակտիվներին վերաբերող շնորհներն վերաբերվում են «Հույսի Ավան» ծրագրի իրականացմանը, ինչպես նաև Գեղարքունիքի մարզում հիմնած պտղատու այգիներին և անասնապահական ֆերմային: 843,574 հազ. դրամի եկամուտներին վերաբերող շնորհները ուղղված են «Օժանդակություն ՀՀ քաղաքային և գյուղական համայնքների ազգաբնակչությանը» ծրագրի իրականացմանը:

11.1. Ակտիվներին վերաբերող շնորհներ

Ստորև ներկայացված են 2019 և 2020 թթ. ակտիվներին վերաբերող շնորհների շարժը և մնացորդները:

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	2020թ.	2019թ.
Տարեսկզբի մնացորդ	**1,005,908**	**1,116,035**
Տարվա ընթացքում ստացված/դուրս գրված	(14,529)	2,079
Եկամուտ ճանաչված	(134,205)	(148,231)
Վերադասակարգված	171,082	36,025
Տարեվերջյան մնացորդը	**1,028,256**	**1,005,908**

11.2. Եկամուտներին վերաբերող շնորհներ

Ստորև ներկայացված են 2019 և 2020 թթ. եկամուտներին վերաբերող շնորհների շարժը և տարեվերջյան մնացորդները:

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	2020թ.	2019թ.
Տարեսկզբի մնացորդ	**653,578**	**529,334**
Տարվա ընթացքում ստացված	1,283,516	1,098,444
Եկամուտ ճանաչված	(922,055)	(937,875)
Վերադասակարգված	(171,082)	(36,025)
Շնորհի ետ վերադարձ	(383)	(300)
Տարեվերջյան մնացորդ	**843,574**	**653,578**

12. Արձակուրդային պահուստ

Հիմնադրամը ստեղծել է աշխատակիցների չօգտագործած արձակուրդային վճարների պահուստ՝ 11,030 հազ. դրամի չափով, որը նախորդ ժամանակահատվածների համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության մեջ ճանաչվել է, որպես այլ ծախս: 2020 թ-ին պահուստի չափը պակասեցվել է 4,498 հազ. դրամով և կազմել՝ 6,532 հազ. դրամ:

13. Եկամուտ ճանաչված շնորհներ

Եկամուտ ճանաչված շնորհները Հիմնադրամի եկամուտներին և ակտիվներին վերաբերող շնորհների ծախսագրված գումարներին համարժեք եկամուտ ճանաչված մասն են (տես՝ ծանոթագրություն 11.1 և 11.2):

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Եկամուտներին վերաբերող շնորհներ	922,055	937,875
Ակտիվներին վերաբերող շնորհներ	134,205	148,231
Ընդամենը	**1,056,260**	**1,086,106**

14. Այլ եկամուտներ

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հիմնական միջոցների օտարումից եկամուտներ	3,926	9,608
Արտարժույթով արտահայտված ակտիվների և պարտավորությունների վերագնահատումից եկամուտներ	111,402	29,238
Այլ եկամուտներ	7,054	7,036
Ընդամենը	**122,382**	**45,882**

15. Կառավարման և վարչական ծախսեր

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հատուցումներ աշխատակիցներին	139,690	194,363
Հիմնական միջոցների, կենսաբանական և ոչ նյութական ակտիվների մաշվածություն	146,140	140,171
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	3,835	16,527
Գրասենյակային, կոմունալ և փոստային ծախսեր	2,688	15,425
Բանկային ծախսեր և աուդիտ	5,832	8,443
Չփոխհատուցվող հարկեր	5,531	7,319
Այլ կառավարչական ծախսեր	23,566	32,039
Ընդամենը	**327,282**	**414,287**

16. Իրականացված ծրագրեր

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Օժանդակություն ՀՀ քաղաքային և գյուղական համայնքների բնակչությանը[1]	749,698	389,266
Դրամական օգնություն անապահով ընտանիքներին	28,848	-
Հոլանդական ծրագիր՝շինությունների վերանորոգում և ընթացիկ սպասարկում	-	248,083
Այլ	19,552	24,154
Ընդամենը	**798,098**	**661,503**

[1] Այս ծրագրի շրջանակներում Հիմնադրամը սննդի և առաջին անհրաժեշտության այլ ապրանքների բաշխում է կատարում անապահով ընտանիքներին:

17. Այլ ծախսեր

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հիմնական միջոցների վաճառքի ինքնարժեք	2,311	5,790
Գյուղմթերքի օտարման ինքնարժեք	8,114	7,561
Արտարժույթով արտահայտված ակտիվների և պարտավորությունների վերագնահատումից ծախսեր	29,367	31,355
Այլ ծախսեր	13,182	10,542
Ընդամենը	**52,974**	**55,248**

18. Հարկեր

ՀՀ հարկային օրենսդրության համաձայն հարկերի վճարման և հարկային պարտավորությունների հաշվառման համար ստեղծվել է մեկ միասնական հաշիվ, որին էլ Հիմնադրամը 2019 և 2020 թթ. կատարվել է իր հարկային վճարումները, բացառությամբ տեղական ինքնակառավարման մարմիններին կատարվող հարկերի և այլ պարտադիր վճարների:

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	Գերավճար	Ապառք
Շահութահարկ	-	1,597
Եկամտային հարկ	-	178
Գույքահարկ շինություն.	247	-
Գույքահարկ մեքենաների	80	-
Հողի հարկ	486	-
Նպատակային սոց. վճար	-	71
Դրոշմանիշային վճար	16	-
Ընդամենը	**829**	**1,846**

19. Փոխկապակցված գործարքների բացահայտում

Աննա Ջամբազյան՝ Հիմնադրամի նախագահ

- Հանդիսանում է Հիմնադրամի աշխատակիցը՝ զբաղեցնում է փոխտնօրենի պաշտոնը: 2020թ-ին հաշվարկված աշխատավարձը կազմել է 7,338 հազ. դրամ:
- Հիմնադրամին վարձակալությամբ տրամադրել է տարածք, 2020թ-ին վարձակալական վճարը կազմել է 1,594 հազ. դրամ:

Շաքար Դանիելյան՝ Հիմնադրամի Խորհրդի անդամ

- Հանդիսացել է Հիմնադրամի աշխատակից մինչև 30.04.2020թ: 2020թ-ին հաշվարկված աշխատավարձը կազմել է 840 հազ. դրամ:

Սիեր Դանիելյան՝ Հիմնադրամի Խորհրդի անդամ

- Հանդիսացել է Հիմնադրամի աշխատակիցը մինչև 30.04.2020թ, զբաղեցրել է տեխնիկի պաշտոնը: 2020թ-ին հաշվարկված աշխատավարձը կազմել է 4,014 հազ. դրամ:

Վահե Դանիելյան՝ Հիմնադրամի Խորհրդի անդամ

- Հանդիսացել է Հիմնադրամի աշխատակից մինչև 30.04.2020թ, զբաղեցրել է պահեստապետի պաշտոնը: 2020թ-ին հաշվարկված աշխատավարձը կազմել է 4,089 հազ. դրամ:

Ահարոն Ղազարյան՝ Հիմնադրամի Խորհրդի անդամ

- Հանդիսանում է Հիմնադրամի աշխատակցց մինչև 30.04.2020թ, զբաղեցրել է տնօրենի խորհրդականի պաշտոնը: 2020թ-ին հաշվարկված աշխատավարձը կազմել է 387 հազ. դրամ:

Բարույեր Ջամբազյան՝ Հիմնադրամի Տնօրեն

- 2020թ-ին հաշվարկված աշխատավարձը կազմել է 17,304 հազ. դրամ:

20. Ֆինանսական գործիքներ

20.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.10-ում:

20.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված մնացորդները վերաբերում են ակտիվների և պարտավորությունների հետևյալ կատեգորիաներին.

Ֆինանսական ակտիվներ

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Առևտրային դեբիտորական պարտքեր	200	400
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	764,182	553,041
Ընդամենը	**764,382**	**553,441**

Ֆինանսական պարտավորություններ

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորություններ	-	-
Վարկեր և փոխառություններ	-	-
Առևտրային կրեդիտորական պարտքեր	1,976	1,355
Ընդամենը	**1,976**	**1,355**

21. Պայմանական պարտավորություններ

21.1. Գործարար միջավայր

Հայաստանում շարունակական բնույթ են կրում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները: Տնտեսական անբարենպաստ պայմանները և ներդրումների ցածր մակարդակը բացատրվում են 2020թ-ին Արցախի Հանրապետությունում տեղի ունեցած ռազմական բախումներով և դրանց հաջորդած հրադադարի ռեժիմի պայմաններով, ներքաղաքական անկայուն վիճակով և իհարկե նույն տարում ամբողջ աշխարհը պառալիզացրած COVID-19 համավարակով՝ պետությունների կառավարությունների կողմից սահմանված կրկնակի արգելափակումներով:

Պետք է ավելացնել նաև՝ որպես զարգացող շուկա Հայաստանում բացակայում են կատարյալ գործարար միջավայրը և համապատասխան ենթակառուցվածքները, որոնք գործում են ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում: Հայաստանի տնտեսության առանձնահատկություններից են՝ բիզնեսի ոլորտում ու տնտեսության մեջ օտարերկրյա կապիտալի համեմատաբար փոքրածավալ ներգրավվածությունը, ինչպես նաև Հայաստանի տնտեսության մեկուսացված լինելը համաշխարհային տնտեսության համապատասխան սեկտորներից:

2020թ-ի ընթացքում կորոնավիրուսի և նրա կանխարգելիչ միջոցառումների ազդեցությունները սահմանափակել են գործառնությունների ծավալները ֆինանսական շուկաներում, և դրա հետևանքով ֆինանսական գործիքների իրական արժեքները կարող են չհամապատասխանել իրականացված և հաշվառված ցուցանիշներին: Իհարկե պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ այս խնդիրը շարունակվում է և մնում է օրակարգային 2021թ-ին:

Այս հաշվետվությունները օգտագործողները պետք է իրենց դատողություններն անեն հաշվի առնելով դրանց պատրաստման օրվա և այդ օրվան հաջորդող իրադարձությունները՝ կոռոնավիռուսի և նրա կանխարգելիչ միջոցառումների ազդեցությունը ֆինանսական հաշվետվությունների ցուցանիշների վրա, եթե կլինեն այդպիսիք, որոնք կարող են անհրաժեշտ համարվել: Մասնավորապես այնպիսի հարցերի վերաբերյալ ինչպիսիք են.

- ակնկալվող պարտքային կորուստների գնահատումը,
- արժեզրկման հետևանքով ակտիվների փոխհատուցվող գումարների գնահատումը,
- փոխառության ծախսումների կապիտալացումը,

- հասույթի գնահատման վերանայումը, անավարտ պայմանագրերի մասով ակտիվների արժեզրկումը,
- վարձակալության ժամկետների գնահատումը:

Ներկա պահին Հայաստանում տնտեսական դժվարությունների բացասական արտահայտման ձևերից են՝ ներդրումների ցածր մակարդակը, ֆինանսական միջոցների արտահոսքը, նվազ եկամուտը, արտաքին ֆինանսական կառույցների միջոցների նվազումը և Սփյուռքից դրամական միջոցների ներհոսքի կրճատումը:
2020 թ-ին Հիմնադրամի շրջանառու միջոցները ապահովվել են՝ ի հաշիվ ստացված նվիրատվությունների և շենքի վարձակալական գործունեության:

21.2. Համավարակի ազդեցությունը

2020 թ-ի մարտի 11-ին Առողջապահության Համաշխարհային Կազմակերպությունը (ԱՀԿ) հայտարարեց, որ կորոնավիրուսի տարածումը կարող է բնութագրվել որպես համավարակ:
Վիրուսը զգալի ազդեցություն է ունեցել համաշխարհային տնտեսության վրա: Կազմակերպություններն առնչվեցին կորցրած եկամուտների և խափանված մատակարարման շղթաների խնդիրների հետ: Չնայած նրան, որ որոշ երկրներ փորձեցին մեղմել սահմանափակումները՝ մեղմացումները աստիճանական են եղել, և կազմակերպությունների գործունեության ընդհատման արդյունքում միլիոնավոր աշխատակիցներ կորցրեցին իրենց աշխատանքը: Համավարակը զգալի անկայունության հանգեցրեց ամբողջ աշխարհի ֆինանսական և ապրանքային շուկաները: Տարբեր երկրների կառավարություններ ձեռնարկեցին միջոցառումներ՝ տնտեսության տուժած ճյուղերին և կազմակերպություններին ֆինանսական և ոչ ֆինանսական օժանդակություն ցուցաբերելու համար:
Տնտեսական արգելափակումն ազդել է նաև կազմակերպությունների վարձակալության պայմանագրերի վրա: Հայաստանում կորոնավիրուսի տարածման պահից ի վեր ՀՀ Կառավարությունը ներկայացրել է COVID-19-ի հետևանքների չեզոքացման երկու տասնյակից ավել ծրագրեր, որոնցից մի մասն ուղղված են վիրուսի սոցիալական ազդեցության դեմ պայքարին, իսկ մնացած ծրագրերը՝ վիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացմանը:

21.3. Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման ներկա փուլում ապահովագրության շատ տեսակներ զարգացման սկզբնական փուլում են և լայնորեն չեն կիրառվում: Սա է պատճառը, որ Հիմնադրամը ապահովագրված չէ գործունեության ընդհատման, ակտիվների կորստի կամ այլ անձանց կողմից պարտավորությունների չկատարման հետևանքով վնասներ կրելու իրադարձություններից: Քանի դեռ Հիմնադրամը ապահովագրված չէ համապատասխան ռիսկերից, առկա է ակտիվների կորստի կամ ոչնչացման վտանգ, որը կարող է անբարենպաստ ազդեցություն ունենալ նրա գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

Բացառություն է կազմում ավտոմեքենաների պարտադիր ապահովագրության համակարգը, որը ծածկում է վթարի դեպքում երկրորդ կողմին պատճառված վնասը:

21.4. Անորոշություններ

Քանի դեռ վերը նշված անորոշություններում առկա են տարակուսանքներն ու ենթադրությունները, Հիմնադրամի ղեկավարությունը չի կարող վստահաբար հաշվարկել, թե դրանք ինչ չափով կարող են ազդեցություն ունենալ Հիմնադրամի ակտիվների ու պարտավորությունների մնացորդային արժեքների վրա:

Հիմնադրամի 2020 թ-ի ֆինանսական հաշվետվությունները չեն ներառում ֆինանսական ճշգրտումի ազդեցությունները, եթե այդպիսիք կան, որոնք կարող էին անհրաժեշտ համարվել, եթե ներկա համաշխարհային ճգնաժամի ազդեցությունը նկատելի և արժանահավատորեն գնահատելի լիներ Հայաստանում:

Տնօրեն
Բ. Ջամբազյան

Գլխավոր հաշվապահ
Հ. Ղափանճյան

3 մայիսի, 2021թ.

Կ. Տ.

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 14.07.2021 20:56